

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՍԵԿՆՈՂԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 22–25-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ գիտաժողով «Հայ մեկնողական գրականության դարձումները» խորագրով, որի նպատակն էր ներկայացնել դրականության այդ տեսակի սուղև դրված խնդիրները, համակարգել կատարված աշխատանքները: Գիտաժողովին մասնակցում էին նաև գիտնականներ արտերկրից:

Բացման խոսքով հանդես եկավ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» կենտրոնի անօրեն պ.գ.գ. Ակադ Բողոյանը: Գիտաժողովին օրհնության խոսք հղեց Ա.Մենայն Հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ը՝ անդրադառնալով հայ մեկնողական գրականության ուսումնասիրության արդի վիճակին, խնդիրներին և քրիստոնեական աշխարհում այդ գրականության ունեցած դերին, զրսևորած առանձնահատկություններին: Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունեց այն բոլոր գիտնականներին և գիտաժողովի մասնակիցներին, ովքեր իրենց ավանդն են բերում հայ մեկնողական գրականության ուսումնասիրության գործում:

Բացման արարողությունից հետո կատարվեց շնորհանդես «Աստվածաձայնի գրքերի հայ մեկնությունների դրագարան»-ի երկու հատորների (Անանուհի «Մեկնություններ Մարգարէութեանն Նսայեայ» և Սարգիս Կուլդի «Ի մեկնություննէ մարգարէութեանն Նսայեայ», «Մեկնություններ Կաթողիկեայ թղթաց») հրատարակման առիթով: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո հրատարակվելիք մատենաշարը ներկայացրեց պլեսվոր խմբագիր Տ. Եղնիկ եպս. Պետրոսյանը:

Գիտաժողովի կազմակերպումը մեկնողական երկերի ճանաչողական և գիտական մեծ արժեքի վկայությունն է: Գիտաժողովի նյութերը ներկայացվեցին հետևյալ թեմաներով. «Հայ մեկնողական գրականության համաքրիստոնեական ակունքները», «Ծեսը և նվիրատեսական համակարգը մեկնություններում», «Աշխարհի ճանաչողությունը մեկնություններում», «Աստվածաձայնը և մեկնողական գրականությունը», «Հայ մեկնողական գրականության առանձնահատկությունները», «Մեկնությունը՝ դարաշրջանի պատմության հայելի», «Մեկնությունը և հայ մշակույթը»:

Նստաշրջանի առաջին նիստը նվիրված էր մեկնողական գրականության համաքրիստոնեական ակունքներին (նախագահող՝ Տ. Սեբոստ արք. Գրիգորյան): Առաջին զեկուցումը ներկայացրեց Նյու Յորքի Ս. Ներսես հոգևոր ճեմարանի դասախոս պրոֆ. Աբրահամ Տերյանը: Այն նվիրված էր Աստվածաձայնի այլաբանական մեկնության սկզբնավորող Փիլոն Ալեքսանդրացուն և նրա նախորդներին: Փիլոնի այլաբանական մեկնության առանձնահատկություններին զուգընթաց զեկուցողը քննեց հայ մեկնողական գրականության վրա նրա թողած ավզեցությունը: Թբիլիսիի պետական համալսարանի վրաց հին գրականության ամբիոնի վարիչ պրոֆ.

Էլեգոլջա Խինթիբիճեի զեկուցումը կրում էր «Մեկնությունները միջնագարյան վրացական թարգմանություններում» խորագիրը: Նա ներկայացրեց միջնագարյան վրացական թարգմանություններում հանդիպող մեկնությունների տեսակներն ու առանձնահատկությունները (բնագրի մեջ ներմուծված մեկնություններ, որ հարազատ են Եվթիմիոս Աթոսացու թարգմանություններին, տարատեսակ լուսանցագրություններ, որոնք իրենց դարգացման բարձրակետին հասան Եփրեմ Մցիրեի մեկնություններում): Արիստոտելի անունով Հայտնի «Յաղագս աշխարհի» գործի հայերեն թարգմանությունների և գրանց մեկնությունների մասին էր ԵՊՀ-ի գասախոս Գայանե Պողոսյանի ելույթը: Նա նկարագրեց-քննեց երկի հայտնի մեկնությունների երեք խումբ. առաջինը վերագրելով Վահրամ Բաբունուն, երկրորդը բնորոշեց իբրև Բաբունու մեկնության պարզեցված տարբերակ, իսկ երրորդը («Յաշխարհացն չուծմունք») վերագրեց Գրիգոր Տաթևացուն: Զեկուցողը զանց էր առել հանդուցյալ պրոֆ. Վազգեն Հակոբյանի կատարած քննության արդյունքները:

Գիտաժողովի երկրորդ նիստի զեկուցումները նվիրված էին մեկնություններում առկա ծեսի և նվիրապետական համակարգին (նախագահող՝ պրոֆ. Պարույր Մուրադյան): Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանի զեկուցումը («Առաքելներու համապատուութեան սուրբ-դրական տուեալներու մեկնաբանութիւնը ըստ Մխիթար Սկեռացոյ») նվիրված էր XIV դ. Հայ եկեղեցու վարդապետներից մեկի՝ Մխիթար Վարդապետ Ակեռացու «Յաղագս համապատուութեան երկոտասանից առաքելոց» գրությունը: Զեկուցողը ներկայացրեց հեղինակի ամբողջական մեկնաբանությունը, լուստրանկով համապատուութեան վերաբերյալ Նոր Կտակարանի խոսքերն ու ապացույցները՝ ըստ Հայաստանյայց եկեղեցու ավանդության:

Ուշագրավ էր Երուսաղեմի եբրայական համալսարանի դասախոս Սերժո Լա Պորտայի «Կեղծ Դիոնիսիոս Արեոպագոցու հայերեն մեկնությունները» զեկուցումը: Զեկուցողն ամփոփ ներկայացրեց Դիոնիսիոս Արեոպագոցու երկերի՝ Համամ Արևելցու և Դավիթ Քոբայրեցու ու Հակոբի անունով Հայտնի հայկական շարք-լուծմունքները, եզրակացնելով, որ ունենք ավելի շուտ անանուն լուծմունքի երկու շարք: Հայագետն անդրադարձավ նաև հայկական եկեղեցական գրականության վրա Արեոպագոցու երկերի եզրաբանական ազդեցությունը: Կանոնագիտական մեկնություններին էր վերաբերում Ա. Բոգոյանի զեկուցումը («Կանոնական իրավունքը մեկնողական գրականության տեսադաշտում»): Նա ջանաց ցույց տալ, որ թեպետ Հայ կանոնագիտական միտքը առկա է եղել Հայաստանում քրիստոնեության պաշտոնական ընդունումից անմիջապես հետո, այնուամենայնիվ առաջին կանոնագիտական մեկնությունները մեզ են հասել X դ. և պատկանում են Անանիա Մոկացու և Հակոբ Ծպատեցու գրչին: Զեկուցողը եզրակացրեց, որ X դ. կեսերին Վասպուրական աշխարհում գոյություն ունեցող կանոնագիտական մեկնությունների դպրոց, որը հետևում էր հայկական հասարակության և եկեղեցու ավանդական կանոնական պատկերացումների վարդապետական բնականոն ճանապարհի պահպանմանը:

Գիտաժողովի երրորդ նիստի զեկուցումները քննում էին աշխարհի ճանաչողությունը մեկնություններում (նախագահող՝ պրոֆ. Վիդեն Դա-

յտարյան): Ավետարանների բնագրի աշխարհաբար թարգմանություն հարցերի վերաբերյալ էր Տ. Եղնիկ եպս. Պետրոսյանի «Թարգմանական խնդիրներ» զեկուցումը, որտեղ նա կարևորեց Սուրբ Գրքի գրաբար քննական բնագիր ունենալու անհրաժեշտությունը, անգրագարձավ Հին և Նոր կտակարանների գրաբարից աշխարհաբար «Էջմիածնի թարգմանություն» սրբագրման իր աշխատանքների արդյունքում առաջացած որոշ խնդիրների համակարգված ներկայացմանը:

IV դ. նշանավոր աստվածաբան և փիլիսոփա Գրիգոր Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւնն» զրքում արտահայտված բնափիլիսոփայական ու բժշկագիտական հայացքների մասին էր պրոֆ. Ս. Վարդանյանի զեկուցումը: Ընդունելով երկի ունեցած դերը հայ միջնադարյան Հայաստանում բժշկության և բնագիտության զարգացման գործում, զեկուցողը մանրամասնորեն քննեց Նյուսացու այս երկի կապը ստոիկյան, նորպատոնական փիլիսոփայության ու Գալենի «Մարդու մարմնի նշանակություն մասին» գրքի հետ և բնութագրեց Գ. Նյուսացու աշխարհայացքը որպես դասական հունա-հռոմեական փիլիսոփայության ու բժշկագիտական մտքի միաձուլում քրիստոնեական դավանաբանության հետ:

Բյուզանդագետ Մ. Շիրինյանը անհրաժեշտ նկատեց անդրադառնալ Գրիգոր Արասյանի «Գիրք պատճառաց» երկին («Գիրք պատճառաց»-ը՝ մեկնությունների միջնադարյան հանրագիտարան)՝ գնահատելով նրանում առկա թե՛ հայ, թե՛ բյուզանդադիտության համար արժեքավոր բազմարժեքի նյութերը: Զեկուցողը խոսեց «Գիրք պատճառացում» առկա առանձին հետաքրքիր եզրերի, այդ թվում «Զինորսական» ոճի մասին: Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի դասախոս Լ. Հովսեփյանի զեկուցումը նվիրված էր երգ երգոցի Գրիգոր Տաթևացու մեկնությունները: Զեկուցողը ներկայացրեց մեկնության ձեռագրերը, կառուցվածքային հատկանիշները, մեկնության եղանակը, աղբյուրները և գրանցից օգտվելու Տաթևացու եղանակները:

Սեպտեմբերի 23-ի առաջին նիստը նվիրված էր Աստվածաշնչին և մեկնողական գրականությանը (նախագահող՝ Տ. Եղնիկ եպս. Պետրոսյան): Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի պրոֆ. Ք. Հաննիկն անդրադարձավ Աստվածաշնչի չափածո մեկնություններին («Լուծմունք կամ սուրբգրային պոեզիա. չափածո մեկնություններ հայկական Աստվածաշնչի գրքերում»): Նա 1637–1638 թթ. Նոր Զուղայում և 1270 թ. Կիլիկիայում ընդօրինակված Աստվածաշնչի օրինակներով կարևորեց այս կարգի մեկնությունների կոմպոզիցիոն, հեղինակային և այլ հարցեր պարզելու անհրաժեշտությունը:

Հայագիտության համար կարևոր հաջգի՝ Աստվածաշնչի կազմելիք քննական բնագրի և նրա հիմք գրչագրերի բնագրական ընթերցումները ճանաչելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված պրոֆ. Պ. Մուրադյանի «Դիտարկումներ ավանդաբար Ս. Մեսրոպի ընդօրինակություն համարվող Ավետարանի շուրջ» խորագրով զեկուցումը: Նա ունկնդիրներին ներկայացրեց և արժեքավորեց Մեսրոպ Մաշտոցի պատկանած Ավետարանի 1069 թ. Նարեկա վանքում կատարված ընդօրինակությունը՝ մատնանշելով նրանում եղած ընթերցումների նախնականությունը: Հայագետ

Արմեն Տեր-Ստեփանյանն իր ելույթում («Սուրբ Գրքի Հայերեն մեկնութ-  
յունների աղբյուրներ») պարզաբանեց Հայերեն մեկնությունների աղբյուր  
Հանդիսացող օտար և Հայ հեղինակների երկերի գործածություն եղանակ-  
ները, տոանձնահատկություններն ու նպատակները (մեկնությունների  
Համառոտում ուսումնական կամ գործնական նպատակներով, քաղվածու  
մեկնություններ):

Երկրորդ նիստի զեկուցողներն անդրադարձան Հայ մեկնողական գրա-  
կանության առանձնահատկություններին (նախագահող՝ պրոֆ. Աբրահամ  
Տերյան): Գրականագետ-բնագրագետ Գ. Մուրադյանը նկարագրեց-քննեց  
Բարոյախոսի թարգմանությունները, Հայերեն թարգմանության խմբագ-  
րությունները և դրանց Հնագույն ձեռագրերը, գրանցում առկա տոմարա-  
գիտական և լեզվական տվյալները, որոնց հիման վրա եզրակացրեց, որ  
այն պատկանում է դասական շրջանի թարգմանությունների թվին:

Եղիշեի երկի յուրահատուկ մեկնողական բառապաշարի մասին էր Խոս-  
լիսյի Բողոքի Համալսարանի աշխատակից Հ. Լ. Պաննեի «Մարգեղութ-  
յան բառապաշարը Եղիշեի երկում» զեկուցումը, ուր հեղինակը փորձեց  
ցույց տալ Հայ սոստվածաբանական մեկնությունների նշանակությունը  
վաղ շրջանի Հավատաբանական բանաձևումների ուսումնասիրության  
գործում: Հայագետ-բյուզանդագետ Օ. Վարդապետյանն անդրադարձավ  
(«Թուղթ առ Ողիմսիադ» որպես մեկնողական ծրագրի թարգմանություն») Գրիգոր Նյուսացու Երգ երգոցի մեկնության նախաբանին, որն ուշագրավ  
դիտողություններ է պարունակում մեկնողական մեթոդների և դրանց վե-  
րաբերող սերմնաբանության մասին: «Թղթի» հունարեն բնագրի և Հայե-  
րեն թարգմանության Համադրությունը զեկուցողը փաստեց, որ այդ երկը  
ևնթարկվել է խմբագրման, որի արդյունքում Նյուսացու մոտեցումը սեղմ-  
վել է և մերձեցվել չափավոր «անտիոքյան» տեսակետին:

«Մեկնությունը դարաշրջանի պատմության հայելի» խորագրով երրորդ  
նիստը (նախագահող՝ պրոֆ. Քրիստիան Հաննիկ) բացեց Հմուտ ծիսագետ  
Հ. Շառլ Թրնուն «VIII–XII դդ. Միսական տարեշրջանի զարգացումը մեկ-  
նությունների միջոցով. ծիսական դրքերը» զեկուցումով: Նա ընդհանրաց-  
րեց VIII դ. ի վեր երևան եկող ծիսական մեկնությունների դիախրոնիկ հա-  
մառոտ համայնապատկերը և ներկայացրեց այդ մեկնությունների մեկնո-  
ղական բովանդակությունը: Պրոֆ. Կրոգ Մութաֆյանի զեկուցումը վերա-  
բերում էր կաթոլիկների XIV դ. կեսերի հակամիաբնակ գրություններին:  
Պատմական պատմությունների դոկտոր Վրեթ Վարդանյանը («Դարաշրջանի  
իմաստավորումը Խոսրով Անձևացու և Գրիգոր Նարեկացու մեկնողական  
երկերում») քննեց վերածնունդի հատուկ կենսագրագրությունը, այլա-  
բանական սրակերները երկրային գունեզ օրինակներով մեկնաբանելու  
առանձնահատկությունները, մարդակենտրոնությունն այդ երկերում:

Սեպտեմբերի 24-ի նիստը «Մեկնությունը և Հայ մշակույթը» թեմայով  
(նախագահող՝ պատմ. գիտ. դոկտոր Ա. Բոգոյան) տեղի ունեցավ Օչականի  
Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատանը: Պրոֆ. Վ. Ղադարյանը «Կենդանիների  
պատկերագրությունը «Խորանների մեկնություններում» զեկուցումով  
ցույց տվեց, որ խորաններում թռչունների և կենդանիների պատկերները  
փոխվում են ըստ սարբեր մեկնությունների: Ինչպես «Բարոյախոսում».

այնպես էլ խորանները մեկնություններում կենդանիներն ու թռչունները մեկնաբանվում են, նմանեցվում կրոնական և բարոյական-գիտական պատկերների ու հասկացությունների հետ:

Արևելագետ Հ. Սահփունյանը ներկայացրեց ձեռագիր և սպազիր հայաստա թուրքերեն մեկնողական գրականությունն իր գարգացման պատմություն մեջ. հայաստա թուրքերեն ձեռագրական շրջանի հոգևոր գրականությունը, հայոց եկեղեցիների կողմից հրատարակված ինքնուրույն և թարգմանական հայաստա թուրքերեն մեկնողական սպազիր երկերը:

Յուրաքանչյուր զեկույցին հաջորդող բովանդակալից քննարկումները և կարծիքների փոխանակումն ավելի հետաքրքիր դարձրեցին գիտաժողովը, սրի հանգիսավոր փակումից հետո մասնակիցները մեկնեցին Սաղմոստիանք, իսկ ավելի ուշ նրանց ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: Քննարկվեցին գիտաժողովի արդյունքները, հետագա ծրագրերը և գրանք իրադրծելու հնարավորությունները: Վեհափառ Հայրապետը, կարևորելով նման գիտաժողովների կազմակերպումը, պատրաստակամություն հայտնեց աջակցելու և օգնելու գիտնականներին իրենց հեաքրքրող խնդիրների և հետագայում կազմակերպվելիք աշխատանքների կապակցությամբ:

Սեպտեմբերի 25-ին գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Հաղարծին, Դոշավանք և Սևանի վանք, որտեղ հանդիպում կազմակերպվեց Սևանի դպրեվանքի սաների հետ, իսկ Սևանի վանքում հյուրերն ունկնդրեցին նաև հայ եկեղեցու սպասավորների անդուգական կատարումները:

Գիտաժողովի աննախընթաց ընդգրկումն արդեն խոսում է գիտական շրջանակներում մեկնությունների նկատմամբ ծավալվող հետաքրքրություն մտտին: Հուսանք, որ այս գիտաժողովը կդառնա հաճելի ավանդույթ:

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ